ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2012-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Կոտայքի մարզում դիտվում է մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների նվազում:



Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշները Կոտայքի մարզում, %

Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Կոտայքի մարզում 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 0,7%-ով և կազմել է 92,1%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը աճել է 0,1%-ով՝ կազմելով 93,9%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,1%-ով՝ կազմելով 97,2%: 2019 թվականին 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել «Արգելի ԱԿ» ՊՈԱԿ-ում (73,3%), «Գեղաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ում (82,7%) և «Ջրվեժի ԲԱ» ՊՓԲԸ-ում(83,5%), (Աղյուսակ 1):

Առողջապահության նախարարությունում ցուցանիշների բարելավման նպատակով կազմակերպված քննարկումից հետո մարզում 2019թ. դեկտեմբերին դիտվել է

ցուցանիշների որոշակի բարելավում օգոստոս ամսվա համեմատությամբ, մասնավորապես 1 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,1%-ով և կազմել 92,1%, 2 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 0,4%-ով և կազմել 93,9%:

Հանրապետության ողջ տարածքում հատկապես ցածր է մեծահասակ ազգաբնակչության ԱԴՓ-Մ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ 33,8%, իսկ Կոտայքի մարզում՝ 62%:

Ստորև ներկայացվում է պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի:



Գծապատկեր 2՝ 2019թ. Կոտայքի մարզում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի